

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
7. ԱՄՓՈՓՈՒՄ	17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


2022թ. ապրիլին ՀՀ տնտեսական իրավիճակը որոշակիորեն բարելավվել է մարտի համեմատ՝ հիմնականում կապված արտահանման վերականգնման և շինարարության արագ աճի հետ: Ապրիլ ամսվա տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) նախորդ տարվա ապրիլի համեմատ կազմել է 8.8%՝ մարտի համեմատ արագանալով 2.1 տոկոսային կետով: Սակայն, կուտակային՝ տարեսկզբից հաշվարկված, տնտեսական ակտիվության աճը դեռևս ունի դանդաղման միտում: 2022թ. հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ը կազմել է 9.4%՝ հունվար-մարտի համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2022թ. հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 4.9 և 2.9 տոկոսային կետ: Ապրիլին մարտի համեմատ ՏԱՑ-ի արագացումը առավելապես պայմանավորված է եղել շինարարության աճի արագացմամբ, ինչպես նաև արդյունաբերության աճի որոշակի վերականգնմամբ, որոնց վերաբերյալ առավել մանրամասն կներկայացվի հաջորդիվ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-ապրիլին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը¹, %



Արդյունաբերության ոլորտի իրական թողարկումը, թեև վերականգնվել է նախորդ ամսվա անկումից հետո, սակայն, գրանցել է բավական ցածր աճ: Արդյունաբերության ոլորտի իրական թողարկումը 2022թ. ապրիլին աճել է ընդամենը 1.2%-ով: Այդ պայմաններում, արդյունաբերության կուտակային աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ հունվար-ապրիլին կազմելով 2.6%՝ հունվար-մարտի 3.1%-ի դիմաց:


¹ Արդյունաբերության մարտ ամսվա անկման ցուցանիշը վերանայվել է ՀՀ ՎԿ-ի կողմից, ինչի արդյունքում այն դարձել է -6.8%՝ նախորդ ամիս հրապարակված -6.9%-ի փոխարեն:

2022թ. հունվար-մարտ ամիսների տվյալներով² արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 10.9% աճով (տեմպը դանդաղել է շուրջ 5.8 տոկոսային կետով), որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 6.0 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվել է 12.9% անկում, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 3.6 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 0.5 և 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ծավալների աճի տեմպը շարունակել է արագանալ: Շինարարության աճն ընթացիկ տարվա ապրիլին կազմել է 15.6%՝ մարտի համեմատ արագանալով 7.4 տոկոսային կետով: Հունվար-ապրիլ ամիսների շինարարության աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 9.0%: Հատկանշական է, որ աճի արագացում է նկատվում նախորդ տարվա զգալիորեն մեծ բազայի համեմատ, ինչը նշանակում է, որ շինարարության ոլորտում առկա է էական ակտիվություն:

² 2022թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը նույնպես արագացել է՝ պայմանավորված ՌԴ-ից ժամանողների քանակի աճով: 2022թ. տարեսկզբից ծառայությունների աճի տեմպը բավական բարձր է եղել, որը փետրվարին փոքր-ինչ դանդաղելուց հետո շարունակել է արագանալ մարտ և ապրիլ ամիսներին: Ապրիլին ծառայությունների աճը կազմել է 27.1%՝ մարտի համեմատ արագանալով 1.2 տոկոսային կետով, իսկ հունվար-ապրիլ ամիսների աճը կազմել է 23.5%՝ արագանալով 1.3 տոկոսային կետով: Ծառայությունների աճին էականորեն նպաստել է ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ սանկցիաների հետևանքով ՀՀ ժամանող ռուսաստանցիների քանակի աճը, ինչի մասին է վկայում նաև զբոսաշրջիկների այցելությունների շուրջ 2.9 անգամ աճը:

2022թ. հունվար-մարտ ամիսների տվյալներով³ ծառայությունների աճը առավելապես պայմանավորված է «տրանսպորտ», «տեղեկատվության և կապ» և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.3, 4.5 և 4.0 տոկոսային կետ:

³ 2022թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտի աճի տեմպը նույնպես արագացել է՝ պայմանավորված ՌԴ քաղաքացիների ներհոսքի աճով: 2022թ. ապրիլին առևտրի աճի տեմպը արագացել է՝ կազմելով 8.6%՝ մարտի 6.6%-ի դիմաց: Հունվար-ապրիլ ամիսների առևտրի աճի տեմպը ևս արագացել է՝ կազմելով 7.8%: Առևտրի ոլորտը նույնպես իր վրա կրել է ՌԴ-ից ՀՀ ժամանողների դրական ազդեցությունը:

2. ԱՐՏԱԽԱՆՄԱՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ⁴, %




⁴ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար ամսվա ցուցանիշը նախկինում հրապարակված 53.4%-ից դարձել է 53.5%, իսկ հունվար-մարտ ամիսների ցուցանիշը՝ 26.9%-ից 27.4%:

Արտահանման աճը նախորդ ամսվա դանդաղումից հետո ապրիլին որոշ չափով վերականգնվել է, սակայն զիջում է տարեսկզբի բարձր աճերին: 2022թ. ապրիլին արտահանման աճը կազմել է 19.8%՝ մարտի համեմատ արագանալով շուրջ 14.5 տոկոսային կետով: Նախորդ ամսվա դանդաղումը պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով արտահանման լոգիստիկ խնդիրներով, որոնք մեղմվել են ապրիլին՝ հանգեցնելով արտահանման աճի վերականգնմանը: Սակայն, կուտակային աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ հունվար-ապրիլին կազմելով 25.2%՝ հունվար-մարտի 27.4%-ի դիմաց:

2022թ. հունվար-մարտ ամիսների տվյալներով⁵ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «հանքահումքային արտադրանք» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 6.1, 5.6, 4.6 և 4.0 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁶, %



Ներմուծման ծավալների աճի տեմպը մնացել է տարեսկզբի համեմատ ցածր մակարդակում: 2022թ. ապրիլին ներմուծման աճը կազմել է 24.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.4 տոկոսային կետով: Հունվար-ապրիլ ամիսների աճի ցուցանիշը կազմել է 39.1%՝ հունվար-մարտի համեմատ դանդաղելով 6.6 տոկոսային կետով: Ներմուծման աճի տեմպը շարունակել է

⁵ 2022թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսներին հրապարակված ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար ամսվա աճի ցուցանիշը նախկինում հրապարակված 67.4%-ից դարձել է 67.3, հունվար-փետրվարի ցուցանիշը՝ 60.4%-ից 60.5%, իսկ հունվար-մարտի ցուցանիշը՝ 45.6%-ից 45.7%:

գերազանցել արտահանման աճին՝ վատթարացնելով առևտրային հաշվեկշիռը և նվազեցնելով արտահանման բարձր աճի դրական տնտեսական հետևանքները:

Ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը (հունվար-մարտ ամիսների տվյալներով⁷), որոնցից առավել նշանակալի է եղել «հանքահումքային արտադրանք», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 8.0, 6.0 և 5.3 տոկոսային կետ դրական նպաստում:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


2022թ. հունվար-մարտին անվանական աշխատավարձի աճի տեմպը բարձր է եղել⁸, ինչի արդյունքում ամիսներ շարունակ նվազելուց կամ գրեթե նույնը մնալուց հետո փոքր-ինչ աճել է իրական աշխատավարձը: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 9.6%-ով՝ կազմելով 212,676.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.1%-ով և կազմել 173,717.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 11.2%-ով՝ կազմելով 230,567.0 դրամ:

Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-մարտին սպառողական գների միջին մակարդակն աճել է 7.0%-ով, ինչի պայմաններում իրական աշխատավարձի աճը կազմել է 2.4%:

⁷ 2022թ. հունվար-ապրիլ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, ապրիլի տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվարին-մարտին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)






2022թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամը զգալիորեն արժևորված է եղել նախորդ տարվա նույն ամիսների համեմատ: Այսպես, ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-ապրիլին արժևորվել է շուրջ 8.7%-ով, իսկ եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը կազմել է 17.4%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպն էլ ավելի բարձր է և հունվար-ապրիլին կազմել է 19.8%:

ՀՀ դրամի արժևորումը շարունակվում է նաև մայիսին՝ հասնելով 2015թ. սկսած ամենաբարձր մակարդակին: Արժևորման տեմպը որոշակի շրջադարձ է կատարել մայիսի սկզբին՝ կապված ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի անփոփոխ թողնելու որոշման հրապարակման հետ, որից հետո, սակայն, արժևորումը շարունակվել է:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և ՀՀ ԿԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022թ. փետրվար-մայիս ամիսներին




5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը արագացել է հունվար-ապրիլ ամիսներին: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-ապրիլին աճել են շուրջ 23.7%-ով՝ նախորդ ամսվա 21.8%-ի փոխարեն: Հարկային եկամուտների աճը կազմել է 23.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 2.9 տոկոսային կետով: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվար-ապրիլ ամիսներին աճել են շուրջ 33.3%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 71.4%-ով:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է շահութահարկի (աճը՝ 51.7%), ավելացված արժեքի հարկի (աճը՝ 20.2%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 3.4 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 9.1, 6.1 և 4.8 տոկոսային կետ:


Հարկ է նշել, որ ԵԱՏՄ մաքսատուրքերի ստացման հետ կապված խնդիրները (տեխնիկական խնդիրների պատճառով ԵԱՏՄ ընդհանուր «կաթսայից» մաքսատուրքերը ՀՀ-ն չի ստանում) շարունակվել են նաև ապրիլին, ինչի արդյունքում հունվար-ապրիլ ամիսներին մաքսատուրքերի գծով մուտքերը նվազել են շուրջ 48.5%-ով՝ ընդհանուր հարկերի աճին հակազդելով շուրջ 2.6 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար-ապրիլ		2022թ. հունվար-ապրիլ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	2.4	2.4	23.2	23.2
ԱԱՀ	3.4	1.0	20.2	6.1
Շահութահարկ	-1.0	-0.2	51.7	9.1
Եկամտային հարկ	-0.5	-0.2	2.8	0.8
Ակցիզային հարկ	-26.0	-1.9	15.0	0.8
Շրջանառության հարկ	-2.6	-0.1	28.3	0.7
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	13.7	0.5	46.7	1.8
Մաքսատուրք	31.8	1.3	-48.5	-2.6
Սոցիալական վճար	77.1	1.2	43.4	1.2
Այլ հարկային եկամուտներ	46.1	0.8	26.0	0.7
Պետական տուրք	-6.3	-0.1	240.3	4.8

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերը փոքր չափով աճել են: 2022թ. հունվար-ապրիլին ՀՀ պետական բյուջեի ծախսերը աճել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 3.3%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը բավական ցածր է եղել՝ կազմելով 2.0%, իսկ կապիտալ ծախսերն աճել են 15.2%-ով՝ կազմելով 66.7 մլրդ դրամ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ




Պետական բյուջեի հավելուրդը մեծացել է: 2022թ. ապրիլին կառավարության կողմից հավաքագրված եկամուտներն էականորեն գերազանցել են ծախսերի ծավալը, ինչի արդյունքում բյուջեի հավելուրդը աճել է՝ հասնելով 55.7 մլրդ դրամի: Ստացվում է, որ կառավարությունը չի ծախսում այն գումարները, որոնք հավաքագրել է տնտեսությունից՝ այդպիսով զսպող ազդեցություն ունենալով տնտեսական ակտիվության վրա:

5.4. Պետական պարտք

2022թ. ապրիլի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,447.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ աճելով 7.7%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,961.2 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 8.3%-ով: Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 3.2%-ով: Տարեսկզբի համեմատ կառավարության պարտքն աճել է 2.2%-ով կամ 193.2 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ներքին պարտքի աճով:

Պարտքի աճին զուգահեռ շարունակել են աճել նաև պետական պարտատոմսերի տոկոսադրույքները: Կարճաժամկետ տոկոսադրույքները նախորդ տարվա ապրիլի համեմատ աճել են 3.6 տոկոսային կետով՝ հասնելով 10.4%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 3.4 տոկոսային կետով՝ կազմելով 11.1%:


Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի տեմպն արագանում է բավական մեծ քայլերով: Ապրիլին գնաճի տեմպը կազմել է 8.4%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.0 տոկոսային կետով: Ընդ որում, մարտի գնաճը նույնպես մեծ քայլով էր արագացել՝ շուրջ 0.9

տոկոսային կետով: Գնաճի բարձր տեմպին զուգահեռ դեռևս չեն մարում արտաքին աշխարհում գնաճային ճնշումները, հետևաբար ՀՀ-ում գնաճի տեմպի արագացումը կարող է շարունակվել նաև հաջորդ ամիսներին:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. ապրիլին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը շարունակել է էականորեն դանդաղել: 2022թ. ապրիլի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 6.0%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.6 տոկոսային կետով: Ավանդների աճն ապահովվել է ռեզիդենտների ավանդների շուրջ 11.6% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալը նվազել է 10.6%-ով:

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 4.4 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել տնային տնտեսությունների ավանդների 9.5% աճը, իսկ ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը կազմել է 20.3%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 3.6 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


2022թ. ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ վարկերի ծավալները շարունակել են դանդաղել: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 2.1%-ով: Վարկերի անկման տեմպը մարտի համեմատ խորացել է շուրջ 1.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են առաջանցիկ տեմպով՝ շուրջ 12.2%-ով և ընդհանուր վարկերին ունեցել 0.7 տոկոսային կետով բացասական նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 1.5%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել 1.4 տոկոսային կետ բացասական նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց վարկերի շուրջ 8.0%-ով նվազմամբ, որի նպաստումը ռեզիդենտների ընդհանուր վարկերին կազմել է -4.5 տոկոսային կետ:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կես



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի⁹ ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 4.4 և 1.9 տոկոսային կեսով դրական նպաստում: Գյուղատնտեսության ոլորտի վարկերի աճն արագացել է վերջին ամիսներին՝ ապրիլին կազմելով 13.4% և ընդհանուր վարկերի աճին նպաստելով 0.7 տոկոսային կեսով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը որոշակիորեն վերականգնվել է մարտի անկումից հետո, սակայն կուտակային աճը դեռևս նվազող շարժընթաց ունի: ՏԱՅ-ի ցուցանիշը մարտին էականորեն դանդաղել էր՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում առաջացած խնդիրներով (հիմնականում արդյունաբերության և արտահանման ոլորտներում), սակայն դրանց մեղմմանը զուգահեռ ՏԱՅ-ի աճի տեմպը որոշակիորեն վերականգնվել է՝ ապրիլին կազմելով 8.8%: Սակայն, կուտակային՝ տարեսկզբից հաշվարկված տնտեսական ակտիվության աճը դեռևս ունի

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում: Այդ պատճառով, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները մի դեպքում նվազում են -1.5%-ով, իսկ մյուս դեպքում՝ -0.1%-ով:

դանդաղման միտում: 2022թ. հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ը կազմել է 9.4%՝ հունվար-մարտի համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով:

2. Տնտեսական ակտիվության տեմպը կարող է նվազել՝ կապված ժամանակավոր գործոնների վերացման հետ: ՏԱՑ-ի աճը էականորեն պայմանավորված է ծառայությունների և առևտրի աճերով, որոնք էլ իրենց հերթին հիմնվում են ՌԴ-ից Հայաստան ժամանող օտարերկրյա քաղաքացիների ներկայացրած պահանջարկի վրա: Հետևաբար, ռուս-ուկրաինական հակամարտության որոշակի կարգավորման պարագայում իրավիճակը կարող է փոխվել, և աճի ներքին գործոնների բացակայության պայմաններում տնտեսական աճի տեմպը կսկսի դանդաղել:

3. ՀՀ կառավարությունը դեռևս որևէ էական քայլեր չի ձեռնարկել ստեղծված իրավիճակից օգտվելու նպատակով: ՌԴ-ից ինչպես բնակչության, այնպես էլ կապիտալի ներհոսքը դեպի Հայաստան տեղի է ունենում առանց կառավարության աջակցության: Իրավիճակը էականորեն ավելի դրական կլիներ, եթե կառավարությունը մշակեր և իրականացներ համապատասխան քաղաքականություն ՏՏ և ֆինանսական ոլորտներում ՌԴ-ից ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև կապիտալի ներհոսքը հեշտացնելու և ՀՀ-ում հնարավորինս երկար պահելու ուղղությամբ:

4. Գների աճի արագացումը շարունակվում է ավելի մեծ քայլերով, այն դեպքում, երբ ԿԲ-ն արդեն իսկ ագրեսիվ կերպով բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքը: Գների աճի տեմպը ապրիլին արագացել է շուրջ 1.0 տոկոսային կետով՝ հասնելով 8.4%-ի: Գնաճի արագացումը առավելապես պայմանավորված է արտաքին աշխարհում էներգակիրների և սննդի գների աճով: Սակայն, վերջիններիս աճը կանխատեսվող հորիզոնում շարունակվելու է, հետևաբար, ՀՀ-ում գնաճի տեմպը հետագա ամիսներին կարող է շարունակել արագանալ: Այս պայմաններում ԿԲ տոկոսադրույքի բարձրացումը սահմանափակ ազդեցություն է ունենում գնաճի վրա: Հետևաբար, կառավարությունը պետք է առավել արդյունավետ կերպով օգտագործի գնաճի դեմ պայքարի այլ գործիքակազմեր, այդ թվում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործիքակազմը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: